


ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՆԱՄԱԿ ՍԻՐՈՅ, ՆԱԽԱՆՉԻ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայիս մեծ է թիւը անոնց, որոնք միշտ նախանձով կ'այրին, երբ իրենց եղբոր յաջողութիւնը տեսնեն, յատկապէս երբ ան նիւթապէս կամ արհեստով եւ կամ իր ուսուցումներուն համար կը յարգուի շատերուն կողմէ: Նախանձոտները, երբ այս տեսնեն, կը հալին ու կը մաշին, բամբասանքի խօսքեր կը յօրինեն անոր մասին եւ Աստուծոյ կամֆին հակառակ կը շարժին, որ իրենց եղբոր այդ յաջողութիւնը շնորհած է: Ահաւասիկ, թէ ինչու, նոյնիսկ եթէ նախանձոտը մեծապէս նզնի եւ բազմաթիւ առաքինութիւններու տէր ըլլայ, կուսական սրբութիւն ունենայ, օրուան ընթացքին պահեցողութեամբ եւ նզնութեամբ ինքզինքը մաշեցնէ գիշեր ու ցերեկ, բուրձով եւ մոխիրով մշտահոս արցունքներ թափէ, իր ողորմութիւններովը աղատանայ, մեծամեծ հրաշքներ գործէ, աղօթքներով եւ փառաբանութեամբ երկնքի հրեշտակներուն նմանի, նոյնիսկ մարտիրոսանայ ու կրակի մէջ այրի եւ սակայն իր սրտին մէջ նախանձ եւ չարութիւն ունենայ, մարդասպաններէ եւ շնացողներէ աւելի պիտի եւ մեղքերու մէջ լողացող ամբարիշտներէն աւելի ամբարիշտ պիտի ըլլայ: Ո՞ր չարիքը ուրեմն կրնայ աւելի ժանտագոյն ըլլալ, քան նախանձը, որ կրակէն աւելի այրող է, սուրէն աւելի բնաջնջող է գայն ունեցողները: Ո՞վ կրնայ հանդուրժել այդ բոցին եւ կամ, ի՞նչ տեսակի ներում պիտի ունենան նման սատանայական անձերը:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ


Յիսուս իր Մարմինն ու Արիւնը, որպէս գրաւական կու տար մարդկութեան, ինչպէս Պօղոս Առաքեալ հարազատօրէն մեկնաբանելով պիտի ըսեր. «Չէ՞ք գիտեր, որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգիին, որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցէք, որ դուք չէ՞ք ձեր անձերուն տէրը, այլ՝ Աստուած, որ փրկագինով ձեզ գնեց: Հետեւաբար, այնպէս ապրեցէք՝ որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով» (Ա. Կորնթ.Ձ. 19-20):

Ս. Պատարագի խորհուրդով՝ առաջին հերթին կը յիշատակենք Աստուածորդոյն Մարդեղութեան Խորհուրդը. Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը վերստին բարձրանայ անստուածաստեղծ այն պատուանդանին, ուրկէ ինկած էր ան նախածրնողներու մեղանշումէն ետք:...

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒՆԻՍԻՐ 2024

ԹԻԻ 4

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 63.7-19: Բ. Տմ. 3.1-12: Յհ. 6.22-38

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 6. 22-38

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը, տեսաւ՝ թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձինն գացին, իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով, թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնատուն եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին.- Վարդապետ, ե՞րբ եկար հոս:

Յիսուս անոնց պատասխանեց.- «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք՝ ոչ թէ որովհետեւ հրաշքներ տեսաք, այլ՝ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը, որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին.- Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք:

Յիսուս անոնց պատասխանեց.- «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր՝ որ ինք որկեց»:

Անոնք ըսին.- Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք: Ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»:

Յիսուս անոնց ըսաւ.- «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ՝ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը: Որովհետեւ Աստուծոյ տուած հացը այն է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»:

Անոնք ըսին.- Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը:

Յիսուս ըսաւ անոնց.- «Ես եմ կեանքի հացը: Ան, որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթեմայ եւ ան, որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չճարանայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք, որ Հայրը ինձի կու տայ՝ ինձի պիտի գան եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ, որովհետեւ ես երկինքէն իջայ ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ՝ կամքը անոր, որ զիս որկեց»:

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ

Սուրբ Սարգիս Զօրավար Կապադովկիոյ Գամիրբ գաւառէն էր: Քաջ եւ առաքինի գինւորական մը, որ զօրապետի աստիճանին հասաւ: Համարակութեամբ կը բարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բազիւնները:

Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիստոնէութիւնը ուրացած էր՝ գահ բարձրացաւ, Սարգիս իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան ապաստանեցաւ, Տիրան թագաւորի մօտ եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան, Պարսից Շապուհ թագաւորին մօտ՝ ծառայելով գինւորական ասպարէզին մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ զօրքին վրայ: Անոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետգհետէ ուշագրաւ դառնալով, Սարգիս եւ իր գաւազը արբայական հրաւեր ստացան գոհ մատուցանելու արքունի մեհեանին մէջ:

Սակայն Սուրբ Սարգիս, նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կողմէրը:

Առ ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին, զօրավարն ու իր որդին մահուան դատապարտուեցան: Իր պարսիկ գինւորներէն տասնչորս անձեր, որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին, առին Սարգիսի մարմինը եւ մաքուր գգեստներով պատեցին: Բայց թագաւորին հրամանով իրենք եւս գլխատուեցան ու իրենց նահատակութիւնը եւս կը յիշատակուի Սուրբ Սարգիսի եւ անոր Մարտիրոս գաւկիյն յիշատակին հետ, ամէն տարի:

Լիբանանի Թեմէն ներս Ս. Սարգիս եկեղեցին կը գտնուի Պ. Համուտի Սիւ շրջանին մէջ եւ ամէն տարի կը կատարուի եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:

ՀԱՐՉՈՒՄ ՊԱՏԱՆՍԻԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչպէս կը կատարուի պսակի արարողութիւնը:

Մեր եկեղեցւոյ մէջ պսակ կատարելու իրաւունքը եկեղեցականին է: Պսակուողները եկեղեցի կու գան: Աստուծոյ եւ հարսնետուր ժողովուրդին դիմաց քահանան կը հարցաքննէ զանոնք, թէ իրենց ազատ կամֆով եկած են պսակուելու եւ հաստատական պատասխան ընդունելէ յետոյ, անոնց աջ ձեռքերը, ինչպէս նաեւ նակատները իրար կը միացնէ, կը խրատէ, կ'աղօթէ եւ կ'օրհնէ անոնց միութիւնը:

Ամուսնութեան պայմաններն են. առողջ եւ անթերի մարմին, չափահասութիւն, կանոնական հասութիւն, ազգային եւ կրօնական նոյնութիւն, փոխադարձ յօժարութիւն եւ սէր:

Կանոնական հասութիւն կը նշանակէ ազգականական որոշ աստիճան: Ամուսնացողներ, իբրեւ պայման սերունդ մը յառաջ բերելու, ազգականութեամբ կամ արիւնով որքան հեռու ըլլան իրարմէ, այնքան յարգած կ'ըլլան եկեղեցւոյ կանոնները, որոնք հիմնուած են առողջապահական սկզբունքներու վրայ: Հին կանոններով՝ մանչ մը եօթը պորտ կամ եօթը ցիւղ կամ եօթը աստիճան հեռու պէտք է ըլլայ իր առնելիք աղջիկէն: Կենցաղի նոր հարկադրութեանց ներքեւ հոգեւոր վերին իշխանութեան կողմէ թոյլատրուած է ազգականական աստիճանը իջեցնել մինչեւ հինգ:

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՉԿՆՆԿԱԼԵՆՔ ՀՐԱՇՔՈՎ ԿԵՐԱԿՐՈՒՄ

Յիսուս երկու առիթներով հրաշքով կերակրեց ժողովուրդը: Առաջին անգամ, հինգ հացով եւ երկու ձուկով կերակրեց աւելի քան հինգ հազար հոգի (Մտ. 15.17-21), իսկ երկրորդ անգամ, եօթը հացով եւ քանի մը մանր ձուկերով կերակրեց աւելի քան չորս հազար հոգի (Մտ. 15.34-38): Ինչո՞ւ Յիսուս միշտ հրաշքով չկերակրեց մարդիկը, այլ՝ միայն երկու անգամ: Յովհանն Ոսկեբերան կը հաստատէ, որ Յիսուս չուզեց միշտ հրաշքով կերակրել մարդիկը, նախ որպէսզի անոնք իրենց փորին ստրուկները չդառնային եւ երկրորդ, որպէսզի աւելի հոգեւոր իրականութեանց հետամուտ ըլլային:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Դ Ա Ս Ը

Քրիստոս հրաշքով չի կերակրեր իր հետեւորդները, որպէսզի իրեն դիմողները միայն նիւթական հացի համար չդիմեն եւ որպէսզի մարդիկ չսպասեն, որ Քրիստոս հրաշալի միջոցներով իրենց պէտքերը գոհացնէ: Մարդիկ պէտք է սորվին իրենց ճակտի քրտինքով վաստկել իրենց օրուայ ապրուստը:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ'ՈՒԶԵՍ ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆՎՈՒՄՍԱՐՄՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ, ԱՆՈՐ ԱՐՄԱՆՔ ԵՂՈՂ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԱՆՃԱՆԸ, Կարդա՛ ՍԱՂԱՄՈՍ 53

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. «Աստուած չկայ», ուստի ապականեցան, զգուցան եւ մեղքեր գործեցին: Չկայ մէկը, որ բարին գործէ: Աստուած երկինքէն կը նայի մարդոց, տեսնելու համար, թէ կա՞յ իմաստուն մարդ մը, որ Աստուծոյ կը դառնայ: Ամէնքն ալ մոլորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան: Չկայ մէկը, որ բարին գործէ, չկայ մէկը, ոչ իսկ մէկ հոգի: Երբեք խելքի պիտի չգա՞ն անոնք՝ որոնք չարիք կը գործեն, անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուտեն հացի պէս, եւ Աստուծոյ չեն աղօթեր: Բայց յանկարծակի ահ ու դողի պիտի մատնուին, ահ ու դողի մը, որուն նմանը չէ եղած երբեք, որովհետեւ Աստուած ցիր ու ցան պիտի ընէ քեզ պաշարողներուն ոսկորները, եւ դուն զանոնք ամօթահար պիտի ձգես, որովհետեւ Աստուած մեքեց զանոնք: Ոհ, տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը, որ Սիոնէն պիտի գայ:

ԱՍՏՈՒԱՍՏԱՆՈՒՆԵՅ

Ամէն մարդ չէ կոչուած Աստուածաշունչի մեկնիչ ըլլալու, բայց ամէն մարդ, որ ինքզինք քրիստոնէայ, այլ խօսքով Քրիստոսի հետեւորդ կը նկատէ, կոչուած է սերտելու Աստուածաշունչը եւ ինքզինք անով լեցնելու, զօրացնելու ու զինելու: